ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

« ՎԲԿ-ՀՄԱԱՊՁԲ-21/33 » ՀՄԱ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

Ք.Վեդի, Գայի 2

2021-10-19-ին ժամը 12:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Սամվել Խաչատրյան (ԳԱՊ)

Հանձնաժողովի անդամներ՝ Ատոմ Զոհրաբյան (ԳԱ)

Անդրանիկ Հակոբյան (ԳԱ)

Հասմիկ Գաբրիելյան (ԲԱ)

Անուշիկ Մանուկյան (ԲԱ)

Հանձնաժողովի քարտուղար՝ Լուսինե Բազիկյան (ԳՀԱ)

1. **<u>1 ՎԲԿ-ՀՄԱԱՊՁԲ-21/33 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում կազմակերպված բանակցությունների վերաբերյալ</u>**

<u>Սամվել Խաչատրյան</u>

Հաշվի առնելով, որ ''Վեդու բժշկական կենտրոն'' ՓԲԸ-ի կողմից կազմակերպված ՎԲԿ-ՀՄԱԱՊՁԲ-21/33 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակիցների՝ «Արֆարմացիա» ՓԲԸ-ի և «Անխոցելի» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկները գերազանցել են գնման հայտով նախատեսված նախահաշվային գինը, համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 40-րդ կետի 5-րդ մասի, ինչպես նաև սույն ընթացակարգի հրավերի 8.7 կետի համաձայն՝ հաղթողին որոշելու նպատակով կասեցվել է հայտերի բացման նիստը և առաջարկված գների նվազեցման նպատակով, ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցներին ծանուցում է ներկայացվել՝ հրավիրելով գների նվազեցման շուրջ բանակցությունների 2021թ. հոկտեմբերի 19-ին ժամը 12:00-ին, կամ նվազեցված գնային առաջարկները ուղարկել lusine.bazikyan@bk.ru էլեկտրոնային փոստին՝ բնօրինակ տարբերակից սկանավորված ձևով կամ էլեկտրոնային ստորագրությամբ:

ՎԲԿ-ՀՄԱԱՊՁԲ-21/33 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում կազմակերպված բանակցություններին նոր նվազեցված գնային առաջարկ չի ներկայացվել մասնկիցների կողմից: Նրանց կողմից հայտով ներկայացված գնային առաջարկները հետևյալն են.

ՀՀ դրամ

Չ/Հ	Չափաբաժնի անվանումը	Ապրանքի նախահաշվային գինը	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	**Թթվածին բժշկական**	**12 500 000**	**<<Արֆարմացիա>> ՓԲԸ**	12 541 666.6	2 508 333.3	15 050 000 (տասնհինգ միլիոն հիսուն հազար)
			<<Անխոցելի>> ՍՊԸ	15 000 000	3 000 000	18 000 000 (տասնութ միլիոն)

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

Սամվել Խաչատրյան

Հիմք ընդունելով ''Արֆարմացիա'' ՓԲԸ-ի և ''Անխոցելի'' ՍՊԸ-ի կողմից ներկայացված նվազեցված գնային առաջարկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել «ՎԲԿ-ՀՄԱՊՁԲ-21/33» ծածկագրով հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնման ընթացակարգի մասնակիցների ներկայացրած հայտերի գնահատման արդյունքները.

Չափաբաժնի համարը	Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը	Անհամապատասխանության նկարագրություն
1-ին	**<<Արֆարմացիա>> ՓԲԸ**	անբավարար	Ներկայացվել է նախահաշվային գնից բարձր գնային առաջարկ
1-ին	**<<Անխոցելի>> ՍՊԸ**	անբավարար	Ներկայացվել է նախահաշվային գնից բարձր գնային առաջարկ

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետով ընդունված որոշումը, ներկայացված գնային առաջարկները և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, այն է. Հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին՝ նախահաշվային գնից բարձր գնային առաջարկ ներկայացված լինելու պատճառով՝ «ՎԲԿ-ՀՄԱՊՁԲ-21/33» ծածկագրով ՀՄԱ գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

Սամվել Խաչատրյան

ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/33 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով ՀՄԱ գնման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել չկայացած գնման ընթացակարգի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու հաջորդ աշխատանքային օրը, ժամը 16:00-ին Վեդու բժշկական կենտրոն ՓԲԸ-ի շենքում ՝ Արարատի մարզ ք.Վեդի Գայի 2:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ս.Խաչատրյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա.Զոհրաբյան

_____ Ա.Հակոբյան

_____ Հ.Գաբրիելյան

_____ Ա.Մանուկյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Լ.Բազիկյան